ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00374 10) 511-771 www.court.am

ԴԴ-1 Ե-4563

«16» **հունիս 2023թ.**

«ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՆԱՐԵԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի 54ա

Հարգելի պարոն Մուրադյան,

Հայտնում ենք, որ համաձայն Դատական դեպարտամենտի և «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊ ընկերության միջև 21.03.2023 թվականին կնքված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/05-2» ծածկագրով պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված ապրանքները Ձեր կողմից չեն մատակարարվել:

Նշվածով պայմանավորված՝ 2023 թվականի մայիսի 16-ին թիվ ԴԴ-1-Ե-3808 գրությամբ խնդրել էինք տրամադրել ապրանքի մատակարարման վերջնաժամկետի մասին տեղեկատվություն: Չստանալով պատասխան, 2023 թվականի մայիսի 31-ին թիվ ԴԴ-1-Ե-4245 գրությամբ հայտնել էինք, որ մինչև հունիսի 14-ը պայմանագրով նշված խմբաքանակն ամբողջությամբ չմատակարարելու դեպքում պայմանագիրը միակողմանի կլուծվի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերության պահանջները, Պատվիրատուն միակողմանի լուծում է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ԱՄՈՒՐ ԳՍՄ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել՝ 12623 (տասնութ հազար) ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն:

Հարգանքով՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Ա. Սաատրյան
Հեռ.010511777